

# ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ

*Հոկտեմբերի 18-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանում, հանդիսավոր իրադրության մեջ, տեղի ունեցավ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետին՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի անձնագրի պաշտոնական հանձնման արարողությունը։*

*Վեհափառ Հայրապետի ընտրությունից և գահակալությունից հետո նրա առաջին ցանկություններից մեկն էր եղել դառնալ Սովետական Հայաստանի քաղաքացի, և Վեհափառը իր սրտի այդ հայրենասիրական իղձը արտահայտել էր հրապարակով, հանդիսավորապես, 1955 թվի հոկտեմբերի 6-ի երեկոյան ի պատիվ Աղգային-եկեղեցական ժողովի հարգարժան պատգամավորներին տրված հայրապետական ճաշկերույթի ժամանակ. «Այս հանդիսավոր առիթով ես կմնդրեմ, որ ինձ շնորհվի Սովետական Հայաստանի քաղաքացիություն։ Այժմ ես իմ տունն եմ վերադարձած և հպարտ պիտի ըլլամ իմ Հայրենիքի, իմ բուն Հայրենիքի քաղաքացիությամբ։ Վասնզի հայտնի է մեզ բոլորիս, թե հայը ինչ քաղաքացիություն ալ ունենա, հոգեպես քաղաքացին է իր Մայր Հայաստանին»։*

*Եվ կատարվեց Վեհափառ Հայրապետի սրտի իղձը— նա դարձավ լիիրավ քաղաքացին Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի։*

*Անձնագրի պաշտոնական հանձնումը Վեհափառ Հայրապետին կատարվեց Հայկական ՍՍՌ Ներքին գործերի մինիստրության Անձնագրային բաժնի պետի միջոցով։*

*Անձնագրի հանձնման արարողությանը ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, Հայկական ՍՍՌ Ներքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատակից Վարդանյանը, Էջմիածնի շրջանային միլիցիայի պետ Հ. Կարապետյանը և Մայր Աթոռի միաբանության անդամները։*

*Բոլոր ներկաները սրտագին շնորհավորեցին Վեհափառ Հայրապետի Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի նոր քաղաքացիությունը՝ մաղթելով արդյունավետ աղգային-եկեղեցական գործունեություն, երկար և երջանիկ տարիների հայրապետություն, Մայր Աթոռին՝ բարգավաճում և Հայրենիքին՝ հզորություն։*

*Վերջում զգացված շնորհակալական խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.*

*«Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայրենի հարազատ պետության հետ իր փոխհարաբերություններում մեջ առաջնորդվեր է միշտ տերունական պատվիրով՝ «Տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։ Այս սկզբունքի լույսի տակ, Մենք ալ պիտի շարունակենք շիտակ և օրինավոր փոխհարաբերություն մեր Հայրենի հարազատ կառավարության հետ։ Մենք կանգնած ենք և միշտ պիտի կանգնինք մեր ժողովուրդի, մեր վերածնած Հայրենիքի կողքին։ Ես խոր շնորհակալություն կհայտնեմ մեր Կառավարության՝ իմ նոր քաղաքացիության երջանիկ առիթով»։*